ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Հիմնարկի անվանումը - Ախուրյանի համայնքապետարան**
2. **Փոստային հասցեն՝ Շիրակի մարզ գ.Ախուրյան Գյումրու խճ 42**
3. **Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման–հատված 08 ենթահատված 007 գլուխ 3:**
4. **Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը - ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան**
5. **Հիմնարկի գանձապետական ստորաբաժանման հաշվառման համարը- 900216302019, 900216302027**
6. **Պետական կառավարման վերադաս մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման -հատված 2 ենթահատված 08 գլուխ 007 :**
7. **Չափի միավորը՝ հազար դրամ:**

Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ կետերի համաձայն:

2023 թվականին համայնքի բյուջեի եկամուտները ծրագրով նախատեսված 3 746 921,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 3 122 061,1 հազար դրամ, արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի կատարումը 83.3 %, թերակատարումը բացարձակ թվերով արտահայտված կազմել է 624 859,9 հազար դրամ, որից 582 934,2 հազար դրամ թերակատարումը թույլ է տրվել «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) եկամտատեսակի գծով, այսինքն սուբվենցիոն ծրագրերով իրականացվող կապիտալ շինարարության աշխատանքային ծավալների, պետության մասնաբաժնի պլանի թերակատարման հետևանքով:

2023 թվականի բյուջեի փաստացի կատարողականի համադրումը 2022 թվականի բյուջեի փաստացի կատարողականի հետ, բացարձակ թվերով արտահայտված 2023 թվականը 1 217 137,5 հազար դրամով գերազանցում է 2022 թվականը, կամ այն կազմել է 163,9% :

2023 թվականին համայնքի բյուջեի սեփական եկամուտներ ծրագրով նախատեսված 1 188 104,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1 146 080,0 հազար դրամ, արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի՝

96,46%-ը, կամ թերակատարումը բացարձակ թվերով արտահայտված կազմել է 41 925,7 հազար դրամ:

2023 թվականին համայնքի բյուջեի սեփական եկամուտների փաստացի կատարողականի համադրումը 2022 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտների փաստացի կատարողականի հետ, բացարձակ թվերով արտահայտված 2023 թվականը 98 041,3 հազար դրամով գերազանցում է 2022 թվականը, կամ այն կազմել է 117,8 % :

Գույքային հարկեր անշարժ գույքից, եկամտի գծով տարեկան պլանը թերակատարվել է 19,8%-ով կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 37 596,0 հազար դրամ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկ եկամտատեսակի գծով ընթացիկ տարվա հարկային պարտավորություն չի հաշվարկվում, նկատի ունենալով, որ նշված հարկատեսակը վերանվանվել է գույքային հարկ, իսկ մինչ վերանվանվելը հաշվարկված, սակայն չվճարված հարկային պարտավորությունները հաշվառվում են որպես հողի հարկի ապառքներ: Նշված հարկատեսակի գծով նախատեսնվել է 33 365,8 հազար դրամ ,որի դիմաց գանձվել է 45 178,7 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 135,4% , բացարձակ թվերով արտահայտված պլանը գերակատարվել է 11 812,9 հազար դրամով:

Հաշվետու տարում «Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար» հարկատեսակի գծով ունեցած ապառքներից գանձվել է 2 929,8 հազար դրամ:

Գույքահարկ փոխադրամիջոցների համար եկամտի գծով տարեկան պլանը գերակատարվել է 15,1%-ով, կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե լրացուցիչ մուտքագրվել է 24 357,4 հազար դրամ:

Տեղական տուրքեր, եկամտի գծով տարեկան պլանը թերակատարվել է 4,8 %-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 468,0 հազար դրամ:

Պետական տուրքեր, եկամտի գծով տարեկան պլանը գերակատարվել է 16,6%-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե լրացուցիչ մուտքագրվել է 1 565,1 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ, ընթացիկ տարում պաշտոնական դրամաշնորհների հաշվին բյուջեն համալրվել է 1 971 101.7 հազար դրամով, որը կազմում է բյուջեի մուտքերի 63,1 %-ը:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների եկամտի գծով տարեկան պլանը կատարվել է 100 % -ով:

Գույքի վարձակալությունից եկամտի գծով տարեկան պլանը թերակատարվել է 15,8%-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 16 183,3 հազար դրամ:

Տեղական վճարներ եկամտի գծով տարեկան պլանը թերակատարվել է 18,9%-ով, կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 21 553,3 հազար դրամ,որից աղբահանության վճար վճարողների կողմից տարեկան պլանը թերակատարվել է 23,3%-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե

պակաս է մուտքագրվել 12 811,6 հազար դրամ:

Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար տեղական վճարի գծով տարեկան պլանը թերակատարվել է 16,7%-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 7 725,1 հազար դրամ, որը բացատրվում է մանկապարտեզների կողմից համակազմի պլանի թերակատարմամբ, մասամբ վերանորոգման աշխատանքներ կատարելու հետևանքով մանկապարտեզների աշխատնքները ժամանակավորապես դադարեցնելով, ինչպես նաև նորակառույց մանկապարտեզների շահագործման ժակետների ձգձգմամբ, ինչպես նաև համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայություններից օգտվող երեխաների համար 100 տոկոսի չափով տեղական վճարի նվազեցման արտոնություն սահմանու մասին Ախուրյան համայնքի 2022 թվականի մարտի 25-ի թիվ 42-Ա որոշումը :

Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանան պարտադիր նորմերի կատարման համար տեղական վճարի գծով տարեկան պլանը գերակատարվել է 11,3%-ով, կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե ավել է մուտքագրվել 270,9 հազար դրամ, որը բացատրվում է, նախորդ տարիների ապառքներ գանձումով, մասամբ էլ Վահրամաբերդ բնակավայրի կազմի մեջ մտնող Լենգես բանավանի բնակֆոնդերի դիմաց վճարներ գանձելով:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցնե և այլն) ծառայություններից օգտվողների համար տեղական վճարի գծով տարեկան պլանը կատարվել է 94,1%-ով,կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջեն թերակատարվել է 519,6 հազար դրամ,որը բացատրվում արտադպրոցական դաստիարակության հաստատություններում համակազմի թվի նվազեցմամբ:

Մրցույթների և աճուրդների մասնակցության համար տեղական վճարի գծով տարեկան պլանը թերակատարվել է 20,7%-ով,ն կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 792,9 հազար դրամ, որը բացատրվում է աճուրդ վաճառքների կազմակերպման անհրաժեշտության բացակայությամբ, մասամբ էլ կազմակեպված աճուրդ վաճառքների մրցակցային չլինելու հանգամանքով:

Օրենքով և այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով տարեկան պլանը կատարվել է 48,4%-ով, կամ բացարձակ թվերով արտահայտված համայնքի բյուջե պակաս է է մուտքագրվել 5 238,0 հազար դրամ,որը բացատրվում է համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար համայնքապետարան դիմած ֆիզիկական և իրավաբանական անձանց թվի նվազումով:

Աղյուսակ 1 Ախուրյան համայնքի սեփական եկամուտների հավաքագրումը՝ ըստ ամիսների



Աղյուսակ 2. 2023 թվականի բյուջեի եկամուտների կառուցվածքը





ԾԱԽՍԵՐ

2023 թվականի համայնքի բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսված 4 069 725,8 հազար դրամից ծախսերի ֆինանսավորմանն է ուղղվել 3 155 250,7 հազար դրամ, բացարձակ թվերով արտահայտած թերակատարումը կազմել է 914,475,1 կազար դրամ, որից վարչական մասի թերածախսը կազմել է 252 278.2 հազար դրամ կամ թերածախսը վարչական ծախսերի մեջ կազմում է 12,1%, իսկ բյուջեի ֆոնդային մասի թերածախսը կազմել է 662 197,0 հազար դրամ, որից 582 934,2 հազար դրամ թերակատարումը թույլ է տրվել «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) գծով, այսինքն սուբվենցիոն ծրագրերով իրականացվող կապիտալ շինարարության աշխատանքային ծավալների՝ պետության մասնաբաժնի պլանի թերակատարման հետևանքով, կամ թերածախսը ֆոնդային մասի նախատեսված ծախսերի մեջ կազմել է 38,0 %, այդ թվում կատարված ծախսերը ըստ ոլորտների և ծրագրերի.

Բաժին 1 Խումբ 0 Դաս 0 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի տարեկան ճշտված պլանով նախատեսված 1 136 117,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 994 116,3 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 31,5%, կամ ոլորտի ծախսերի 87,5 %-ը,որի թերածախսը բացարձակ թվերով արտահայտված կազմում է 142 001,1 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 874 244.7 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 747 094.5 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 85,4% կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 127 150,2 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 261 872.7 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 247 021,8 հազար դրամ,որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 94,3 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 14 850,9 հազար դրամ այդ թվում՝

Բաժին 1 Խումբ 1 Դաս 1 Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ծրագրով, տարեկան ճշտված պլանով նախատեսված 689 302,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 610 482,2 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծրագրի ծախսերի 88,5 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 78 820,2 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 684 350,4 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 605 597,0 հազար դրամ, որը կազմում է ծրագրի վարչական ծախսերի 88,4% կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 78 753,4 հազար

դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 4 952,0 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 4 885,2 հազար դրամ, որը կազմում է ծրագրի ֆոնդային ծախսերի 98,6 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 66,8 հազար դրամ այդ թվում՝ ծրագրով կատարած ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների և փաստացի կատարած ծախսերի տեսակարար կշիռը ըստ վարչական և ֆոնդային մասերի, անալիտիկ ծախսերի համադրումը ընդհանուրի ծախսերի հետ:

Հոդվածի անվանումը	ճշտված պլան	փաստացի կատարվել	կատ. %	բացարձակ թվերով	Տեսա-կարար կշիռը
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	544 000,0	514 332.8	94.5	29 667.2	84.0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	8 000,0	4 725,4	59,1	3 274,6	0.5
-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	2 000,0	667,9	33,4	1 332,1	0.1
-Էներգետիկ ծառայություններ	40 665,4	33 329.4	81.9	7 336.0	6.2
-Կոմունալ ծառայություններ	2 865,8	1 013.0	35,3	1 852.8	0.2
-Կապի ծառայություններ	3 106,0	2 023.1	65,1	1 082.9	0.3
-Ապահովագրական ծախսեր	3 000,	1 299,0	43,3	1 701,0	0
-Ներքին գործուղումներ	2 000,0	272,0	13,6	1 728,0	0
-Համակարգչային ծառայություններ	2 016,0	551,0	27,3	1 465,0	0.1
-Տեղակատվական ծառայություններ	500,0	451,8	90,4	48,2	0.1
-Ներկայացուցչական ծախսեր	2 500,0	622,8	24,9	1 877,2	0.1
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	19 000,0	18 236,2	96,0	763,8	3.0
-Մասնագիտական ծառայություններ	2 500,0	1 630,0	65,2	870,0	0.3
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	13 000,0	832,2	6,4	12 167,8	0.1
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկնորոգում և պահպանում	9 135.3	4 814.2	54.4	4 321.1	0.8
-Գրասենյակային նյութեր և հագուստ	6 000,0	3 269.0	54.4	2 731.0	0.6
-Տրանսպորտային նյութեր	17 061.9	14 151.7	104,0	2 910.1	2.9

-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	2 000,0	1 423,2	71,2	576,8	0.2
-Հատուկ նպատակային նյութեր	3 000.0	1 692.6	56.4	1 307.4	0.3
-Այլ հարկեր	1 000,0	205,7	20,6		0
-Պարտադիր վճարներ	1 000,0	53,8	5,4	946,2	0
Ընդամենը վարչական մաս	**684 350.4**	**605 597,0**	**89.7**	1 000,0	100
- Վարչական սարքավորումներ, **ֆոնդային մաս**	4 952.0	4 885.2	98.7	66.8	
ԸՆԴԱՄԵՆԸ **Բաժին 1 Խումբ 1 Դաս 1 ծրագիր**	**689 302.4**	**610 482,2**	**89.6**	**69 976.8**	

Բաժին 1 Խումբ 3 Դաս 3 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծրագրով, տարեկան ճշտված պլանով նախատեսված 5 851.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 5 815.0 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծրագրի ծախսերի 99.3 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 36,0 հազար դրամ, կամ ոլորտի ծախսերի 0,6%-ը, նշված ծրագում ընդգրկվել է համայնքի գույքային հարկերի հաշվառման համակարգչային ծրագրի սպաարկման հետ կապված ծախսերը, ինչպես նաև «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» -ի գծով ծախսերի համար: Կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածներ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածով վճարվել է աշխատավարձ՝ գումարով 1 999,0 հազար դրամ, «Համակարգչային ծառայություններ» 4232 հոդվածով վճարվել է համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսերը՝ գումարով 3 816,0 հազար դրամ:

Բաժին 1 Խումբ 6 Դաս 1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի տարեկան ճշտված պլանով նախատեսված 440 964,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 377 819,1 հազար դրամ, որը կազմում է ծրագրով նախատեսված ծախսերի 85,6%-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 63 144,9 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 184 043,3 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 135 682,5 հազար դրամ, որը կազմում է ծրագրի վարչական ծախսերի 73,7% կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 48 360,8 հազար դրամ: Բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 256 920,7 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 242 136,6 հազար դրամ, որը կազմում է ծրագրի ֆոնդային ծախսերի 94,2%-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 14 784,1 հազար:

Հոդվածի անվանումը	ճշտված պլան	փաստացի կատարվել	կատ. %	բացարձակ թվերով	Տեսա-կարար կշիռը
-Ներքին գործուղումներ	14 550.0	11 334.0	77.9	3216.0	8.3

-Տեղակատվական ծառայություններ	1 000.0	852.6	85.3	147.4	1.3
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	63 500.0	62 640.9	98.6	859.1	46.0
-Մասնագիտական ծառայություններ	8 000.0	7 312.3	91.4	687.7	5.2
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	2 000.0	1 680.7	84.0	319.3	1.2
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2 000.0	104.3	5.2	1 895.7	0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	2 000.0	110.9	5.5	1 889.1	0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	5 600.0	520.3	9.3	5 079.7	0.4
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	38 379.2	3 8054.3	99.2	324.9	28.0
-Այլ կապիտալ դրամաշնորհներ	4 4014.1	11 443.0	26.0	3 2571.2	8.4
-Պարտադիր վճարներ	3 000.0	1 629.2	54.3	1 370.8	1.2
Ընդամենը վարչական մաս	184 043.3	135 347.7	73.5	48 695.6	100
- Շենքերի և շինությունների կառուցում	190 701.7	176 714.8	92.5	14 321.7	72.8
- Տրանսպորտային սարքավորումներ	12 400.0	12 222.3	98.6	177.7	5.1
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	10 300.0	10 045.0	97.5	255.0	4.2
- Նախագծահետազոտական ծախսեր	43 519.0	43 489.3	99.9	29.7	17.9
Ընդամենը ֆոնդային մաս	256 920.7	242 136,6	94.3	14 449.3	100
ԸՆԴԱՄԵՆԸ	440 964.0	377 819.1	85.6	63 144.9	

Բաժին 2 Խումբ 0 Դաս 0 Պաշտպանություն ծրագրի,

Բաժին 2 Խումբ 2 Դաս 1 Քաղաքացիական պաշտպանության ենթածրագրի ճշտված պլանով նախատեսված 5 100.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 2 050.0 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 0,1% կամ ծրագրով նախատեսված ծախսերի 40.2%-ը, որի թերածախսը բացարձակ թվերով արտահայտված կազմում է 3 050.0 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 1 000.0 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 53.0 հազար դրամ. որը կազմում է ծրագրի վարչական ծախսերի 5.3% կամ բացարձակ թվերով

արտահայտված թերածախսը կազմում է 947.0 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 4 100.0 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 1 997.0 հազար դրամ, որը կազմում է ծրագրի ֆոնդային ծախսերի 48,7%-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 2 103.0 հազար դրամ:

Տնտեսական հարաբերություններ ոլորտի տարեկան ճշտված պլանով նախատեսված 902 884,6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 837 590,7 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 26,5% կամ ոլորտի ծախսերի 92,8 %-ը, որի թերածախսը բացարձակ թվերով արտահայտված կազմում է 65 293,9 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 598 835,7 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 577 373.0 հազար դրամ. որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 96,4 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 21 463,7 հազար դրամ: Բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 304 048,9 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 260 217,7 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 85,5 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 43 831.2 հազար դրամ այդ թվում՝

Բաժին 4 Խումբ 2 Դաս1 « Գյուղատնտեսություն» տարեկան ճշտված պլանով նախատեսված 531 091,5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 520 798,7 հազար դրամ՝ կատարվել է 98,0%, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 10 292,8 հազար դրամ, այդ թվում.

Հակակարկտային կայանների պահպանման և շահագործման համար տարեկան ճշտված պլանով նախատեսված 15 000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 8 338,3 հազար դրամ, պլանը կատարվել է 55,6%,կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 6 661,7հազար դրամ:

ՀՀ Կառավարության կողմից աշնանացան ցորենի ցանքատարածությունների ավելացմանը միտված ծրագրի սպասարկման, գյուղացիական տնտեսությունների կատարած գյուղատնտեսական աշխատանքները մոնիթորինգ կատարելու, և այդ աշխատանքները վարձատրելու նպատակով, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից հատկացված միջոցները, համայնքի ճշտված բյուջեով կազմել է 516 091,5 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 512 460,4 հազար դրամ, այդ թվում ՀՀ Կառավարության կողմից գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն հատկացված 498 195,9 հազար դրամը ամբողջությամբ հատկացվել է գյուղացիական տնտեսություններին :

Բաժին 4 Խումբ 5 Դաս1 Ճանապարհային տրանսպորտ տարեկան ճշտված պլանով նախատեսված 424 437,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 377 297,1 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ոլորտի ծախսերի 88,9 %-ը,կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 47 140,7 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 67 744,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 56 574,3 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 83,5 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 11 169,9 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 356 693.6 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 320 722,8 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 89,9 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 35 970,8 հազար դրամ:

Ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման և սպասարկման համար «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային

կազմակերպություններին» 4637 հոդվածով Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին է հատկացվել 56 574.3 հազար դրամ :
Ախուրյան համայնքի Ազատան,Երազգավորս,Բենիամին և Ախուրյան բնակավայրերում նոր փողոցների կառուցման և կապիտալ նորոգման համար սուբվենցիոն ծրագրերով համայնքի և ՀՀ Կառավարության մասնակցությամբ հատկացվել ու ծախսվել է 320 722,8 հազար դրամ, որից նոր ճանապարհների կառուցման համար 91 900,3 հազար դրամ, գործող ճանապարհների կապիտալ նորոգման համար 228 822,5 հազար դրամ:
Բաժին 4 Խումբ 9 Դաս 1 «Տնտեսական հարաբերություններ(այլ դասերին չպականող)» ծրագրի « Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը» ճշտված պլանով կազմել են -52 644,7 հազար դրամ, փաստացի մուտքերը կազմել են -60 505,1 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 114,9% կամ բացարձակ թվերով արտահայտած պլանից ավել է մուտք եղել -7 860.4 հազար դրամ,նշված ցուցանիշները ամբողջությամբ վերբերվում են «Հողի իրացումից մուտքեր »-ին:
Բաժին 5 Խումբ 0 Դաս 0 «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտի տարեկան ճշտված պլանով նախատեսված 97 850.2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 86 914,0 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 2,8% կամ ոլորտի ծախսերի 88,8 %-ը, որը բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 10 936,2 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 83 802,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 79 512.4 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 94,9 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 4 289,8 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 14 048,0 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 7 401,6 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 52,6 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 6 646,4 հազար դրամ:
Բաժին 5 Խումբ 1 Դաս 1«Աղբահանում» տարեկան ճշտված պլանով նախատեսված 89 252,2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 81 589,1 հազար դրամ, որը կազմում է ծրագրի ծախսերի 91,4 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 7 663,1 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 75 752,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 74 735,5 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 98,6 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 1 016.7 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 13 500,0 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 6 853,6 հազար դրամ,որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 50,8 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 6 646,4 հազար դրամ:
«Աղբահանում» ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածով նախատեսված 14 800,0 հազար դրամի դիմաց, համայնքի բնակավայրերում աղբահանություն կազմակերպելու նպատակով գնման ընթացակարգով կայացած մրցույթի արդյունքում փաստացի կատարած աշխատանքների համար հատկացվել և ծախսվել է 14 779,8 հազար դրամ կամ կատարվել է 99.8%, թերածախսը կազմում է 20,2 հազ.դրամ,
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով 59 955,8 հազար դրամ է հատկացվել Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին Ախուրյան համայնքի բնակավայրերում փողոցների սանիտարական մաքրում և աղբահանում

կազմակերպոլու նպատակով, գումարները հատկացվել են փաստացի կատարված աշխատանքների համար:
«Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածով նախատեսված 13 500,0 հազար դրամի դիմաց աղբամանների գնման նպատակով հայտարարված գնման ընթացակարգով կայացած մրցույթի արդյունքում ծախսվել է 6 853,6 հազար դրամ, թույլ է տրվել թերածախս 6 646,4 հազար դրամ կամ ծախսը կատարվելէ 50,7%:
«Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» ենթածրագրի «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածին է հատկացվել 990,0 հազար դրամ:
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով 3 786.9 հազար դրամ է հատկացվել Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին համայնքի տարածքում կանաչապատման, կանաչ տարածքների պահպանման նպատակով փաստացի կատարած աշխատանքների համար:
«Աճեցվող ակտիվներ» 5131 հոդվածով 548,0 հազար դրամի բազմամյա թուփ է ձեռք բերվել համայնքապետարանի հարակից տարածքը կանաչապատելու նպատակով:
Բաժին 6 Խումբ 0 Դաս 0 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ոլորտի տարեկան ճշտված պլանով նախատեսված 531 373,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 271 943,3 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 8,6% կամ ոլորտի ծախսերի 51,2%-ը, որը բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 259 430,1 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 123 062,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 90 012,8 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 73,1 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 33 054,4 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 408 311,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 181 930.4 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 44,5 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 226 380,8 հազար դրամ,որից՝
Բաժին 6 Խումբ 3 Դաս 1 «Ջրամատակարարում» ծրագրի տարեկան ճշտված պլանով նախատեսված 447 663,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 216 596,6 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ոլորտի ծախսերի 48,3%ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 231 106,2 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 39 352,6 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 34 666,1 հազար դրամ, որը կազմում է ոլորտի վարչական ծախսերի 88,0 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 4 686,5 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 408 311,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 181 930.4 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 44,5%-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 226 380,8 հազար դրամ,այդ թվում ծրագրով կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝
«Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածով նախատեսնված 5 526,0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 5 525,6 հազար դրամ , որը կազմում է նախատեսված ծախսերի 99.9%:
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով 27 370,7 հազար դրամ է հատկացվել

Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին սպասարկելու համայնքի այն բնակավայրերը, որոնք խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործում են իրենց վարչական տարածքներում հողի մակերևույթին բնական ճանապարհով երևակված աղբյուրների ջրերը:
Սպասարկման մեջ մտնում են աղբյուրների ակունքներում կառուցված ջրհավաք ավազանները, ջրագծերը,բնակավայրերի մոտ կռուցված օրվա կարգավորիչ ջրավազանները, ինչպես նաև բնակավայրում գտնվող, բնակիչներին սնուցող ջրագծերի ցանցը, առանձին բնակավայրերի դեպքում էլ կոյուղու ցանցը:
2023 թվականին համայնքի բյուջեից վերը նշված նպատակների համար հատկացվել է 27 370,7 հազար դրամ:
Սուբվենցիոն ծրագրերով Բենիամին, Երազգավորս, Հովիտ բնակավայրում կառուցվող ոռոգման ջրագծերի և դրանց ենթակառույցների կառուցման համար համայնքի բյուջեով նախատեսվել է 408 311,2 հազար դրամ , որի դիմաց փաստացի կատարվել է 181 930.4 հազար դրամ, թույլ է տրվել թերածախս 226 380,8 հազար դրամ, կամ ծախսերը կատարվել են 44,5% :
Բաժին 6 Խումբ 4 Դաս 1 «Փողոցների լուսավորում» ծրագրի տարեկան ճշտված պլանով նախատեսված 76 734,6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 51 862,7 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ոլորտի ծախսերի 67,5 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 24 871,9 հազար դրամ, որը ամբողջությամբ վերաբերվում է բյուջեի վարչական մասին, ֆոնդային մասով ծախսեր չեն նախաեսնվել, ծրագրով կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝
«Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածով բյուջեով նախատեսված 37 374.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 23 437,7 հազար դրամ, կամ կատարվել է 62,7% կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 13 936,9 հազար դրամ:
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով 28 425,0 հազար դրամ է հատկացվել
Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին սպասարկելու համայնքի բնակավայրերի փողոցների լուսավորման ցանցը: Այդ նպատակով ՀՈԱԿ-ին փաստացի կատարած աշխատանքների համար ֆինանսավորվել է 28 425,0 հազար դրամ:
Բաժին 6 Խումբ 6 Դաս 1 «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ(ալ դասերին չպատկանող)» ծրագրի տարեկան ճշտված պլանով նախատեսնված 6 975,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 3 484.0 հազար դրամ, կամ ծախսերը կատարվել են 49,9%, թույլ է տրվել թերածախս 3 491,0 հազար դրամ:
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով 3 484,0 հազար դրամ է հատկացվել
Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ին՝ սպասարկելու համայնքի Ախուրյան բնակավայրի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների ընթացիկ նորոգման և պահպանման համար: Փաստացի կատարած աշխատանքների համար կազմվել է կատարողական ակտեր:

Բաժին 8 Խումբ 0 Դաս 0 «Հանգիստ մշակույթ և կրոն» ոլորտի ծախսերը տարեկան ճշտված պլանը կազմել է 38 873,5 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարվել է 31 108,2 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 1,0% բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կացմում է 7 765,3 հազար դրամ կամ ծախսերը կատարվել են 80,0% : Ծրագրերով կատարված ծախսերը ըստ ծրագրերի և ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

Բաժին 8 Խումբ 2 Դաս 1 ծրագրի « Գրադարաններ » ճշտված պլանով նախատեսված 30 073,5 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 25 075.5 հազար դրամ, ծրագրի պլանը կատարվել է 83,3 % կամ թույլ է տրվել թերածախս 4 998,0 հազր դրամ, նշված գումարը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով հատկացվել է Ախուրյանի Գրադարան ՀՈԱԿ-ին փաստացի կատարած ծախսերի համար:

Բաժին 8 Խումբ 2 Դաս 4 ծրագրով «Այլ մշակույթային կազմակերպություններ» ճշտված պլանով նախատեսնված 8 800.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 6 032,7 հազար դրամ, կամ ծախսերը կատարվել են 68,5%, թույլ է տրվել ծախսերի թերակատարում 2 767.3 հազար դրամ:

Սույն ծրագրով կազմակերպվել և սպասարկվել են համայնքում անցկացված մշակույթային միջոցառումները :

Բաժին 9 Խումբ 0 Դաս 0 ծրագրի «Կրություն » ոլորտի տարեկան ճշտված պլանով նախատեսված 1 306 284,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 902 679,6 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 28,6% , կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 403 605,2 հազար դրամ կամ կատարվել է 69,1 %, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 560 215,2 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 524 994,7 հազար դրամ, որը կազմում է վարչական ծախսերի 93,7 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 35 220.5 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 746 069,6 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 377 684.9 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 50,6%-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 368 384,7 հազար դրամ;

Բաժին 9 Խումբ 1 Դաս 1 «Նախադպրոցական կրթություն» ծրագրով ճշտված բյուջեով նախատեսված 1113 137,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 725 629,4 հազար դրամ, որը կազմում է ծախսերի 65,1 %-ը, կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 387,507,6 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 369 567,4 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 350 294.5 հազար դրամ, որը կազմում է վարչական ծախսերի 94,7 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 19 272,9 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 743 569,6 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 375 334.9 հազար դրամ,որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 50,4%-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 368 234,7 հազար դրամ, ծրագրի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

« Գույքի և սարքավորումների վարձակալություն» 4216 հոդվածով նախատեսնված 400,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 369,1 հազար դրամ, թերածախսը 30,9 հազար դրամ:

«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով նախատեսված 369 167,4 հազար դրամի

դիմաց փաստացի ծախսվել է 349 925,5 հազար դրամ,պլանը կատարվել է 94,8 %, բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմել է 19 241,9 հազար դրամ:
Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքի Բայանդուր, Կառնուտ, Շիրակ և Վահրամաբերդ բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման համար համայնքի բյուջեի «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածով նախատեսվել է 666 079,1 հազար դրամ, որի դիմաց փաստացի ծախսը կազմել է 363 530,3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 54,5 %, կամ բացարձակ թվերով արտահայտված պլանը թերակատարվել է 302 548,8 հազար դրամով:
«Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածով նախատեսված 77 490, 5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 11,804,6 հազար դրամ: Պլանը կատարվել է 15,2% կամ բացարձակ թվերով արտահայտված պլանը թերակատարվել է 65 685,9 հազար դրամ:
Բաժին 9 Խումբ 5 Դաս 1 «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրով ճշտված բյուջեով նախատեսված 193 147,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 177 050,1 հազար դրամ, որը կազմում է ծախսերի 91,6 %-ը,կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 16 097,7 հազար դրամ, որից բյուջեի վարչական մասով նախատեսված 190 647,8 հազար դրամից փաստացի ծախսը կազմել է 174 700,1 հազար դրամ, որը կազմում է վարչական ծախսերի 91,6 % կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 15 947,7 հազար դրամ, բյուջեի ֆոնդային մասով նախատեսված 2 500,0 հազար դրամից փաստացի ծախսը կազմում է 2 350,0 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ֆոնդային ծախսերի 94,0 %-ը կամ բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմում է 150,0 հազար դրամ, ծրագրի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների:
«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածով նախատեսված 190 647,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 174 700,1 հազար դրամ, պլանը կատարվել է 91,6%, բացարձակ թվերով արտահայտված թերածախսը կազմել է 15 947,7հազար դրամ:
«Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածով նախատեսված 2 500,0 հազար դրամի դիմաց կատարվել է 2 350,0 հազար դրամ, թույլ է տրվել թերակատարում 150,0 հազար դրամ:
Բաժին 10 Խումբ 0 Դաս 0 «Սոցիալական պաշտպանություն» ոլորտի ծախսերի համար նախատեսվել է 25 000,0 հազար դրամի դիմաց կատարվել է 17 880.0 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 0,6%, թույլ է տրվել 7 120,0 հազար դրամի թերակատարում որը բացատրվում է միանվագ նպաստի (օգնության) համար դիմողների թվի նվազումով ,որից ոլորտի ծախսերի 375,0 հազար դրամը կամ 2,0 %-ը ուղղվել է հարազատին կորցրած անձիք ծրագրին, սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող) ծրագրին է հատկացվել 17 505,0 հազար դրամ, որը կազմում է ոլորտի ծախսերի 97,9 %-ը:
Ոլորտի ծախսերը թերակատարվել են 7 120,0 հազար դրամ,որից վարչական բյուջե 7 120,0 հազար դրամ, թերածախսը բացատրվում է ընթացիկ ծախսերի կարիքի բացակայությամբ:
Բաժին 11 Խումբ 1 Դաս 2 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» ծրագրով հաստատված բյուջեով նախատեսվել է 426 241,9 հազար դրամ,որից համայնքի ավագանու որոշումներով 400 000,0 հազար դրամ ուղղվել է համայնքի բյուջեի ֆոնդային մաս , իսկ 10 968,6 հազար դրամը, որը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է

0,3% , որից համայնքի ավագանու որոշումներով ուղղվել է վարչական բյուջեով չնախատեսնված կամ նախատեսնված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորմանը:

Աղյուսակ 3. Ծախսերը ըստ գործառնական դասակարգման